| | |
|---|---|
| ՊԱՇՏՈՆ | Տեխնիկական սպասարկման մասնագետ |
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | Լրիվ դրույք |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ք. Երևան, ՀՀ |
| ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ | Հնարավորինս շուտ |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ | 28/09/2023թ. |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | 13/10/2023թ. |
| ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ | Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով |

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա Բանկի Համակարգերի և ցանցային ադմինիստրավորման բաժին որպես Տեխնիկական սպասարկման մասնագետ:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընդունել, մշակել, գրանցել աշխատողների հարցումները/միջադեպերը և դասակարգել դրանք ըստ կարևորության և բարդության HelpDesk համակարգում,
- Հեռակա կարգով լուծել աշխատողների ստանդարտ խնդիրները/միջադեպերը և ամենահաճախ տրվող հարցերը,
- Աշխատողների ոչ ստանդարտ միջադեպերի վերահասցեագրում համապատասխան մասնագետներին HelpDesk համակարգում գրանցված հայտով,
- Առաջարկել տարբերակներ՝ հարցումների և միջադեպերի կառավարման գործընթացները բարելավելու համար:

## ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ
- Windows 10/11-ի օպերացիոն համակարգերի վստահ տիրապետում
- Ծրագրային ապահովման հետ աշխատելու ունակություն
- Համակարգչային և գրասենյակային տեխնիկայի հիմնական ըմբռնում
- Աշխատողների հարցումների հետ աշխատելու սկզբունքների ըմբռնում
- Թիմային աշխատանք
- Ինքնակառավարում
- Անալիտիկ մտածելակերպ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Փոփոխություններին պատրաստակամություն
- Կազմակերպչական հմտություններ
- Արագ սովորելու ունակություն
- Տեխնիկական անգլերենի իմացություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն արդյունքի համար
- Ստեղծագործական մոտեցում

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

## ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին, անհրաժեշտ է լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով:
«ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/: